Այս թերությունները, սակայն, չեն արժեքազրկում Ե. Մարգսյանի գիրքը։ Մենագրությունը, ամբողջությամբ վերցված, ծանրակշիռ մի ուսումնասիրություն է, ուր քննարկվող հիմնական հարցերը ճիշտ են լուսաբանված, ուր կան նոր, հետաքրքիր հետևություններ ու եզրակացություններ։ Ե. Մարգսյանի ուսումնասիրությունը գրական երևույթ է սովետական արևելագիտական գրականության մեջ։

Ն. ԳԵՂԱՄՅԱՆ

«ՉԱՐԹՈՆՔ»—ԲԱՑԱՌԻԿ, ԲԵՅՐՈՒԹ, 1962, 500 ԷՋ

Վերջին տարիների ընթացքում սփյուռքում լույս տեսան զգալի թվով գրքեր, տարեգրքեր, հուշագրություններ, որոնք բավականաչափ լայնորեն լուսաբանում են սփյուռքի և Սովետական Հայաստանի կյանքը իր բազմազան կողմերով։ Դրանց թվին է պատկանում «Չարթոնք» խորագրով տարեգիրքը, որը լույս տեսավ Բեյրութում համանուն թերթի 25-ամյակի և սամկավարների կուսակցության 40-ամյակի առթիվ։ Այն ուշագրավ տեղեկություններ է պարունակում սփյուռքահայ մամուլի, դպրոցների, մշակութային ու հասարակական կազմակերպությունների, սփյուռքահայ գաղութների անցյալի և ներկա վիճակի մասին։ Տարեգրքում հատուկ բաժին է նվիրված Սովետական Հայաստանի գիտական ու կուլտուրական կյանքի լուսաբանմանը։ Մանրթանանք «Չարթոնք»-բացառիկում տպագրված մի շարք նյութերի հետ։ Ըստ տարեգրքում բերված տեղեկությունների, այժմ սփյուռքում հրատարակվում է 127 թերթ և ամսագիր։ Հրատարակվող օրաթերթերի ընդհանուր թիվը, բոլոր գաղութներում միասին վերցրած, կազմում է 15, շաբաթաթերթերինը՝ 26։ Մենք ունենք հայահոծ գաղութներ, որտեղ լույս են տեսնում պարբերական մամուլի 20-ից ավելի օրգաններ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Լիբանան)։ Հայկական թերթերի ու ամսագրերի խմբագրությունը մեզ տանում է Թուրքիա, Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Եթիոպիա, Ֆրանսիա, Բուլգարիա, Ռումինիա Արգենտինա, դեպի հեռավոր Ավստրալիա։ Եթե չհաշվենք դաշնակցական մի բանի թերթեր, սփյուռքահայ մամուլի մնացած օրգանները ավելի կամ նվազ չափով կապված են հայրենի իրականության հետ և ավելի կամ նվազ հետևողականությամբ լուսաբանում են Սովետական Հայաստանի կյանքը։

Տարեգրքի հատուկ բաժնում Ասատուր Մակ-բյանը մեզ պատմում է սփյուռքահայ դպրոցների մասին։ Հնահատելի ու խրախուսելի ուսումնասիրություն է կատարել հեղինակը, տալով Լիբանանի, Սիրիայի, Իրանի, Թուրքիայի, Իրաքի, Հորդանանի, Ֆրանսիայի և մյուս գաղութների դպրոցական կյանքի համապատկերը։ Ուսումնասիրության շրջանակներից դուրս են մնացել միայն Հարավային Ամերիկայի հայ գաղութների դպրոցները։ Համադրելով տարբեր գաղութների դպրոցների վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները, դժվար չէ նկատել, որ հայկական դպրոցական գործը ավելի լավ է կազմակերպված Մերձավոր և Միջին Արևելքի հայ գաղութներում։ Լիբանանահայ գաղութն այժմ պահում է 66 դպրոց, ուր սովորում է մոտ 14 հազար երեխա։ Դպրոցներում պաշտոնավարող ուսուցիչների թիվը հասնում է 856-ի։ Սիրիայում կա 64 հայկական դպրոց, ավելի քան 15 հազար աշակերտով։ Զգալի թվով հայկական դպրոցներ կան Իրանում, Թուրքիայում, Իրաքում, Եգիպտոսում և Մերձավոր ու Միջին Արևելքի հայկական մյուս գաղութներում։ Բուրախալի է նշել, որ հայկական դպրոցներ են պահվում այնպիսի փոքր գաղութներում, ինչպիսիք են Եթիոպիայի, Սուդանի, Հնդկաստանի, Կիպրոսի, Կանադայի հայ գաղութները։ Կրթական գործը անմխիթար վիճակում է գտնվում այնպիսի մեծ գաղութներում, ինչպիսիք են Ֆրանսիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Իսկական իմաստով այստեղ հայկական դպրոցներ գոյություն չունեն։ Եղածները կիրակնօրյա դպրոցներ են, որտեղ երեխաները շաբաթական երկու-երեք ժամ հայերեն են պարապում։

ԱՄՆ-ի 250 հազարանոց հայ գաղութում այդպիսի դպրոցներում սովորողների ընդհանուր թիվը 2500-ից չի անցնում։ Նույնն է վիճակը Ֆրանսիայում։ Հայտնի է, որ հենց հայկական այս երկու գաղութներում տեղի է ունենում ձուլման ուժեղ պրոցես։ Ցանկալի կլիներ, որ շարունակելով իր ուսումնասիրությունները, հեղինակը տար հայկական դպրոցների տնտեսական վիճակի, ուսուցման սիստեմի և դպրոցական կյանքի մյուս կողմերի ամբողջական պատկերը։

Գաղութահայ աշխատավորությունը օրհասական ջանքեր է գործադրում պահելու իր ազգային գոյության հզոր ազդակներից մեկը՝ հայ դպրոցը։ Զուրկ պետական ապահովությունից, միշտ զգալով ուսուցիչների ու դասագրքերի պակասը, հաղթահարելով տեղական իշխանությունների կողմից հաճախ հարուցվող խոչըն-

դատները. կրելով այլեայլ գրկանքներ, սփյուռքահայը, այնուամենայնիվ, իր գավակների համար ստեղծում է հնարավոր բոլոր պայմանները, որպեսզի նրանք ուսումնասիրեն հայոց լեզուն, հաղորդակցվեն հայրենի իրականությանը, ուսումնասիրեն հարազատ ժողովրդի անցյալն ու ներկան, ապրեն ու ոգևորվեն հայրենիքի նվաճումներով։

Զափազանց կարևոր ու գործնական նշանակություն ունեցող հարցեր է շոշափում իր հոդվածում Ռոբերտ Ճնպեճյանը։ Պետք է ուսումնասիրել հայ գաղութների անցյալն ու ներկան, այդ նպատակով պետք է խնամքով հավաքել, ի մի բերել, մշակել ու հրատարակել այն, ինչ վերաբերում է հայ գաղութների անցյալին ու ներկային և այսպիսով նախադրյալներ ստեղծել, որպեսզի գրվի հայ ժողովրդի ամբողջական պատմությունը։ Այս է հոդվածի հիմնական դրույթը, որը, ինչ խոսք, ողջունելի է։ Այդ աշխատանքի կարևորությունը ընդգծվում է այն իրողությամբ, որ սփյուռքահայ մի քանի գաղութներում տեղի ունեցող ձուլումը առաջիկա տասնամյակների ընթացքում կարող է հանգեցնել գաղութահայ ազգային կյանքի շատ կողմերի անհետացմանը։ Հեղինակը բարձր է գնահատում այն գիտական մեծ աշխատանքները, որոնք տարվում են Հայաստանում հայ ժողովրդի պատմության հարցերի ուսումնասիրության բնագավառում։ «Անցյալի առանձին աշխատողներու փոխարեն,—գրում է հեղինակը,—այսօր գոյության կոչված է հսկա կազմակերպություն մը, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը։ Այստեղ խմբային ձևով առաջ կտարվի հսկայական աշխատանք հայ ժողովրդի կյանքի ու մշակույթի պատմությունը վերականգնելու և անոր մոռացված անցյալը ի հայտ բերելու համար» (էջ 241)։

Բացի վերը հիշատակված նյութերից, տարեգիրքը հետաքրքիր հոդվածներ է գետեղել Լիբանանի հայ գաղութի պատմության, Հայ բարեգործական ընդհանուր միության, Եգիպտոսում գործող Ազգային հիմնադրամ կոչվող կազմակերպության, Թերեյան մշակութային միության, Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության, Վենետիկի և Վիեննայի միաբանների պատմության Երուսաղեմի հայոց պատրիարքության մասին։ Դրանք, ճանաչողական նշանակությունից զատ, փաստական հարուստ նյութ են մատակարարում բոլոր այն գիտնականներին, որոնք Հայաստանում և արտասահմանում զբաղվում են սփյուռքահայ գաղութների պատմությամբ և նրանց ժամանակակից վիճակով։

Ուշագրավ է նաև գաղութահայ գեղարվեստի բաժինը, որտեղ գնահատվում ու արժևորվում են սփյուռքահայ մի շարք նկարիչների ու քանդակագործների ստեղծագործությունները։ Դրանց թվում են Հակոբ Գյուրջյանը, Էդգար Շահինը, Օնիկ Ավետիսյանը, Դարիա Կամսարականը, Օրագյանը, Ժանսեմը, Աշոտ Զորյանը, Պոլ Կիրակոսյանը, Խորեն Տեր-Հարությունյանը, Նվարդ Զարյանը, Ռյուզանդ Կոճամանյանը և ուրիշներ։ Դրա հետ մեկտեղ հիշատակվում են սփյուռքահայ դերասանների, կոմպոզիտորների, ռեժիսյորների, երգիչ-երգչուհիների և արվեստի այլ ասպարեզներում ստեղծագործողների անուններ, որոնց թիվը պատկառելի է։

Տարեգիրքը զգալի տեղ է հատկացնում գաղութահայ գրականությանը, հրապարակելով Բենիամին Նուրիկյանի, Վահե Հայկի (ԱՄՆ), Զարեհ Մելքոնյանի, Տիգրան Վարժապետյանի (Լիբանան), Վահրամ Մավյանի (Ֆրանսիա) և մյուսների ստեղծագործությունները։ Սակայն դրա հետ միասին պետք է նշել, որ տարեգրքի տեսադաշտից դուրս են մնացել մի շարք հայտնի գրական անուններ։ Տարեգրքի կազմողները կարող են ասել, որ հնարավոր չէ նրա մեջ ընդգրկել սփյուռքի բոլոր գրողների ստեղծագործությունների նմուշները։ Սակայն պետք է նշել, որ տարեգրքում տեղ են գտել գեղարվեստական տեսակետից բավականաչափ թույլ ստեղծագործություններ, որոնք որևէ նոր խոսք չեն բերում գաղութահայ գրականությանը։ Սովետահայ հեղինակներից «Զարթոնք»-բացառիկում տեղ են գտել Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը, Մարո Մարգարյանը և ուրիշներ։

«Պատմական ակնարկ մը օտար պետության մեջ հայ զորավարներու և բանակներու վրա» խորագրով հոդվածում հետաքրքիր շատ փաստեր ու իրադարձություններ է վերլուծում Հակոբ Թոփչյանը։ Հոդվածն ընդգրկում է բյուզանդական և արաբական տիրապետության շրջանը։

Հայտնի է, որ սփյուռքահայության ընդհանուր թվի վերաբերյալ մենք գիտականորեն վերջնականապես ստուգված տվյալներ չունենք։ Դա կապված է պետական ստույգ վիճակագրական տեղեկությունների բացակայության հետ։ Սփյուռքի մամուլում ժամանակ առ ժամանակ հրապարակվող տվյալները հայերի մասին մոտավոր են, թեև հեռու չեն իրականությունից։ Ըստ «Զարթոնք»-բացառիկում բերված տվյալների հայերի տարածումը արտասահմանում այժմ հետևյալ պատկերն է ներկայացնում. Միջին Արևելք՝ 650 հազար (Իրան՝ 135 000, Թուրքիա՝ 150 000, Լիբանան՝ 110 600, Սիրիա՝ 120 000, Եգիպտոս՝ 30 000, Իրաք՝ 15 000, Հորդանան՝ 5 000, Կիպրոս՝ 3 500), Հյուսի-

ային և Հարավային Ամերիկա՝ 350 000 (ԱՄՆ՝ 250 000, Արգենտինա՝ 50 000, մնացած երկրներում՝ 50 000), Եվրոպա՝ 200 000 (Ֆրանսիա՝ 125 000, Բուլղարիա՝ 25 000, Ռումինիա՝ 25 000, Հունաստան՝ 9 000, Անգլիա՝ 3 000 և այլն), աշխարհի մյուս երկրներում՝ 50 000, ընդամենը՝ ավելի քան մեկ միլիոն 250 հազար մարդ։ Այս ընդհանուր թիվը, մեր կարծիքով, մոտավորապես համապատասխանում է իրականությանը, թեև առանձին երկրների մասին տվյալները կարոտ են որոշ ճշտումների։

Սփյուռքին նվիրված նյութերը ներդաշնակորեն լրացվում են Սովետական Հայաստանին նվիրված բազմապիսի նյութերով։ Դրան ավելացնենք, որ մի շարք հոդվածներում ուղղակիորեն շոշափվում են սփյուռքի և հայրենիքի փոխհարաբերությունները։ Դա մենք համարում ենք ոչ միայն օգտակար, այլև միանգամայն անհրաժեշտ. սփյուռքում հրատարակվող և հայկական կյանքին նվիրված որևէ լուրջ ուսումնասիրություն, լինի դա մենագրություն, տարեգիրք, կամ որևէ այլ ձեռնարկ, չի կարող իսկական հասարակական նշանակություն ստանալ, եթե այս կամ այն չափով չի շոշափում հայրենիքի անցյալի, նրա ներկայի և ապագայի հետ կապված և սփյուռքահայությանը կենսականորեն հուզող հարցերը։ Այդ մասին է, որ իրենց հեղինակավոր խոսքն են ասում սփյուռքի հասարակական գործիչներ, հրապարակագիրներ, գրողներ Անդրանիկ Անդրեասյանը, Ենովք Արմենը, Վահե Վահյանը, Վահե Հայկը, Բարունակ Թովմասյանը, Վահան Մալոյանը և ուրիշներ։ Ընդգծենք նաև այն կարևոր պարագան, որ նրանք նույն գաղութի մարդիկ չեն, այլ ապրում են տարբեր երկրներում՝ Լիբանանում, Եգիպտոսում, Ֆրանսիայում, Ամերիկայում և այլուր։

Սփյուռքահայությունը վաղուց է ըմբռնել այն պատմական ճշմարտությունը, որ Սովետական Հայաստանը ոչ միայն հզոր գրավականն է սփյուռքահայ հատվածի գոյատևման, այլև նրա լավագույն հույսերի, իդեալների ու ակնկալությունների մշտահոսող աղբյուրը։ Ահա թե ինչու այնքան բնական են հնչում տարեգրքի այս տողերը. «...պետք է անվերապահորեն խոստովանել, թե ներկայիս ամբողջ հայ կյանքի միակ պայծառ լուսաշող իրականությունն է Սովետական Հայաստանը։ Քանդել անոր հանդեպ սնուցած սերը, մարել անոր միջոցով վառած հույսի ջահերը, կնշանակե քանդել հարված մը հայ սփյուռքի գոյությանը։ Սփյուռքը Հայաստանով և Հայաստանը սփյուռքով։ Ահա այս պետք է ըլլա փոխադարձ հարաբերության սկզբունքը» (էջ 262)։

Մեր կողմից արդեն հիշատակված Ռոբերտ Ճեպեճյանը իրավացիորեն գտնում է, որ «հնավոր երկիրներու տակ հայ հավաքականություններու գոյատևումն անդամ մի կերպ աննպատակ ճիգ մը պիտի ըլլար, եթե գոյությունն չունենար մեր հայրենիքի շողշողուն իրականությունը» (էջ 243)։ Նույն կարծիքին է հրապարակագիր Նշան Սաաթճյանը, որը գրում է. «Սփյուռքը կմուլվի, կմալի, կայլասերի, եթե ամեն օր չհաղորդվի Մայր Հայրենիքի արյունով ու մարմինով, եթե ամեն օր չիայտա անոր երգերով ու պարերով, եթե ամեն օր իր կուրծքը չուռչի անոր աշխարհահռչակ զավակներու համբավով» (էջ 100)։

Տարեգրքի մի շարք նյութերում ընդգծվում է այն կենդանի հետաքրքրությունը, որ Սովետական Հայաստանի աշխատավորներն ու մտավորականությունը ցուցաբերում են սփյուռքահայ կյանքի բոլոր ասպարեզների նկատմամբ։ Հսկայական նշանակություն են ստանում փոխադարձ այցելությունները, սփյուռքահայ արվեստագետների ելույթները հայրենիքում, սփյուռքահայ գրողների երկերի հրատարակությունը։ Դժվար է գերագնահատել Սովետական Հայաստանի երաժշտական կոլեկտիվների, գրողների և կուլտուրայի բոլոր մարզերի գործիչների այցելությունների նշանակությունը սփյուռքահայ աշխատավորներին։ Ֆրանսահայ գրող և հասարակական գործիչ Ենովք Արմենը անդրադառնալով այդ փոխադարձ լայն կապերին ու հետաքրքրություններին, գրում է. «Հայաստանի գրական բոլոր օրգանները, պաշտոնական հիմնարկություններ կամ գրողներ, անհատաբար և հավաքաբար, այնքան մոտ, տաք և անվիրապահ շամագրգռություններով կզրաղվին արևմտյան հայության հին ու նոր գրական շարժումի հարցերով ու անոնց դիմահեղություններով, որ զարմանքն զատ հիացում կպատճառեն... սփյուռքի գրական ամեն շարժում և գրողներու գործունեության ամեն մանրամասնություն բծախնդիր նժարով կկշռվի և կդատվի Հայաստանի մեջ։ Այդ ուշադրությունը կտարածվի նաև ընկերային շարժումներու վրա» (էջ 182)։

Ուրախալի է նշել, որ սփյուռքահայ աշխատավորական զանգվածները, նրա ծոցից ելած մտավորականությունը Սովետական Հայաստանի ճակատագիրը անվերապահորեն կապում են սովետական բազմազգ պետության հետ, ըստ արժանվույն գնահատում ու հասկանում Սովետական Միության ժողովուրդների բարեկամության վճռական նշանակությունը սովետական բոլոր ռեսպուբլիկաների, այդ թվում և Սովետական Հայաստանի զարգացման ու բարգավաճման գործում։ Թեև գաղութահայության

հետագիմական ուժերը շատ ճիգեր են գործադրում, որպեսզի սփյուռքահայության մեջ սերմանեն ազգայնամոլության ու ատելության գաղափարները, պարփակեն նրան նեղ ազգային կաղապարի մեջ, բայց այդ նրանց չի հաջողվում։ Պատմական հարուստ փորձով սփյուռքահայությունն այժմ իմաստնացել է, դարձել աշխուժ ու շրջահայաց։ «...Ինչ փառավոր և հրաշագան իրականություն է այսօր տեսնել, շնորհիվ այդ իսկ սովետական կարգերուն 49 տարիներ ի վեր ձեռք բերած սխրալի հաջողություններ,—կարդում ենք տարեգրքում։ —Արամ Խաչատրյանի բերնով իսկ հրճվանոք լսեցինք, որ Կովկասի երրեմնի իրարամարտ ցեղեր այժմ եղբայրական զգացումներով իրարու կսատարեն».(էջ 253)։

Արդեն ասացինք, որ տարեգրքի շատ նյութեր լուսաբանում են Սովետական Հայաստանի կյանքը իր բազմազան կողմերով։ Մենք հետաքրքրությամբ կարդացինք «Սովետական թատերագրության ուղին», «Սովետական Հայաստանի քառասուն տարվա վերելքի հորելյանին առթիվ իրապաշտ տեսանկյուններ», «Արամ Խաչատրյանի երաժշտությունը հոգիին խորեն կուգա», «Սովետական Հայաստանի տնտեսությունը» հոդվածները։ Դրանք լրացվում են սովետահայ հեղինակների մի շարք հոդվածներով, որոնք նվիրված են Մարտիրոս Սարյանի, Աբրահամ Ալիխանյանի, Վիկտոր Համբարձումյանի, Ծովակալ Իսակովի գործունեությանը։ Տարեգիրքը զետեղել է Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Յակով Զարոբյանի հայտարարությունը հայրենադարձության մասին, հակիրճ կենսագրական տեղեկություններ հեղափոխական ականավոր գործիչներ Ալեքսանդր Մյասնիկյանի և Աղասի Խանջյանի մասին։ Ուզում ենք հատկապես նշել տարեգրքի խմբագրության ջանքերով պատրաստված «Հայաստանի ժամանակագրությունը», որն ընդգրկում է 1920-ից մինչև 1960 թվականի ժամանակաշրջանը։ Այստեղ ժամանակագրական կարգով տրվում են բոլոր կարևոր իրադարձությունները։

Լավ պատկերազարդված և 500 էջից բաղկացած այս տարեգրքում, ինչպես տեսանք, զետեղված են բազմաթիվ նյութեր՝ հոդվածներ, գեղարվեստական գործեր, ակնարկներ, ուսումնասիրություններ և այլն։ Իհարկե, մենք չենք կարող լիովին բաժանել գրանցում արտահայտված բոլոր մտքերը, մի շարք հարցերում մեր ըմբռնումները տարբեր են։ Սակայն, չնայած դրան, տարեգիրքը, ամբողջությամբ վերցրած, դրական գործ է և լավ նվեր սփյուռքի ընթերցող հասարակությանը։

Ս. ԴԱՍՊԱՐՅԱՆ